ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան.

Ի պատասխան Ձեր 04.05.2021թ. գրության՝ Նոր Նորք վարչական շրջանի Բաղյան փողոցի հ.5/3 հասցեում գտնվող Ռ. Կարապետյանի անվան մարզադպրոցին կից ճանապարհը և Նորք-Մարաշ վարչական շրջանի 9-րդ փողոցի հ.11/62 հասցեում գտնվող մարզադպրոցին կից ճանապարհն արհեստական անհարթություններով կահավորելու, ինչպես նաև Բաղրամյան պողոտայից դեպի Արամ Խաչատրյանի տուն-թանգարան տանող ուղղությամբ՝ ճանապարհահատվածի հարակից մայթին մեքենաների կայանումն արգելելու նպատակով արգելապատնեշներ տեղադրելու խնդիրների մասին, տեղեկացվում է, որ անհարթություն տեղադրելու առաջարկը դիտարկվել է ՀՀ կառավարության 10.01.2008թ. հ.113-Ն որոշման հ.5 հավելվածի 35-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների շրջանակներում, համաձայն որի՝ արհեստական անհարթություններն արգելվում է տեղակայել քաղաքներում արագընթաց երթևեկությամբ մայրուղային ճանապարհներին և ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկությամբ քաղաքային նշանակության փողոցներում: Ուստի նպատակահարմար չէ վերոնշյալ հասցեներում մեքենաների արագությունը սահմանափակող արհեստական անհարթությունների տեղադրումը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, 2021թ. ծրագրի շրջանակներում իրականացնելու 9-րդ փողոցի հ.11/62 հասցեում գտնվող մարզադպրոցին կից ճանապարհի մայթերի կառուցման աշխատանքներ, որը կխոչընդոտի մեքենաների կայանումը:

Ինչ վերաբերում է Բաղրամյան պողոտայից դեպի Արամ Խաչատրյանի տուն-թանգարան տանող ուղղությամբ՝ ճանապարհահատվածի հարակից մայթին մեքենաների կայանումն արգելելու նպատակով արգելապատնեշներ տեղադրելու խնդրին, ապա տեղեկացվում է, որ 2021թ. նախատեսված ծրագրի շրջանակներում նշված հասցեում տեղադրվել է 11 հատ թուջե արգելապատնեշ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ